

Գ. Մ ԱՆՈՒԻԼՍԿԻ

14. 407

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՇՐՋԱՊԱՏՄԱՆ
ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ՌԵՋԵՐՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

32 թշ.

Կ. 27

ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

26 SEP 2006

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

1 DEC 2009

3202

Մ-27 ԱԿ

Դ. ՄԱՆՈՒԻԼՍԿԻ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՇՐՋԱՊԱՏՄԱՆ
ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ՌԵՋԵՐՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

175
37

Д. МАНУИЛЬСКИЙ
О КАПИТАЛИСТИЧЕСКОМ
ОКРУЖЕНИИ И ТРОЦКИСТСКИХ
РЕЗЕРВАХ

Армпартиздат, Ереван, 1937

1

Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վերջին պլենումում մեր կուսակցության զգուշացրեց դեպի մեր յերկրի կապիտալիստական շրջապատումն յեղած անհոգ վերաբերմունքից: Նա առանձնապես հաստատակամորեն կոչ արեց մեզ բոլորիս չմոռանալ, վոր սոցիալիզմն առայժմ հաղթանակել ե յերկրաշնորի միայն մեկ վեցերորդ մասում, վոր մնացած հինգ վեցերորդում տիրապետում են կապիտալիստական կարգերը, իշխում ե բուրժուազիան, վորը ցանկանում ե կա'մ վոչնչացնել սոցիալիզմը և վերականգնել կապիտալիզմը ԽՍՀՄ-ում, կա'մ դոնե կասեցնել սոցիալիստական կարգերի զարգացումը մեղանում:

Կապիտալիստական աշխարհի պաշարն ընդդեմ սոցիալիստական աշխարհի չի դադարել և չի դադարի, քանի դոյություն ունեն այդ յերկու սիստեմները: Պատմությունը մեզ սովորեցնում ե, վոր վոչ մի դասակարգ կամովին չի հեռացել: Վոչ մի սոցիալ-քաղաքական կացութաձև իր տեղն ուրիշին չի դիմել առանց այն բանի, վորպեսզի հին կացութաձևի պաշտպաններն ամենակատաղի կռիվ չմղեյին ծնվող նոր հասարակարգի դեմ: Այս առավել ևս ճիշտ ե սոցիալիզմի նկատմամբ, վորը հիմքից փոխում ե մարդկանց բոլոր տնտեսական ու սոցիալ-քաղաքական հարաբերությունները: Շահագործողական դասակարգերը մենակ պրոպագանդիստական մեթոդով չե, վոր պաշարում են սոցիալիզմի դեմ, այդ նպատակի համար մոբիլիզացիայի յենթարկելով իրենց դիտնականներին, իրենց մամուլը, իրենց յեկեղեցին. նրանք դործի յեն դնում բռնությունը, ինդրում են բանվորական շարժումը, քարուքանդ են անում նրա կազմակերպությունը, դործում են կաշառքի և տեռորի ողնությամբ, հույս ունենալով այդ ճանապարհով իրենց յերկրի ժողովրդական մասաներին հետ պահել սոցիալիզմի համար մղվող պաշարից:

Կապիտալիստական պետությունները միևնույն ժամանակ

տենդորեն սպառազինվում են ցամաքում, ծովի վրա և ողում
վոչ միայն իրենց իմպերիալիստական պահանջների իրականացման
համար իրար դեմ կռվելու, այլև ՍՍՀՄ-ում յեղած իրենց ասելի
սոցիալիստական հասարակարգի տապալումը և խորհրդ-
դային յերկրի ժողովուրդների ստրկացումը հետապնդող պատե-
րազմի համար։ Բայց մինչդեռ այդ պետութւոյններից վոմանը,
վորոնք չահել են 1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազ-
մը, վորոնց մոտ դեռ պահպանվել են բուրժուական-պառլամեն-
տական կարգերը, վորոնք վախենում են իրենց անհանդիստ Փա-
շիստական հարեաններէ, հանդես են բերում խորհուրդների յեր-
կրի հետ խաղաղ գործակցելու վորոչ պատրաստակամութւոյն,
մյուս, Փաշիստական տիպի պետութւոյնները բռնված են ազ-
րեսսիվ ձգտումով, վորը, սակայն, միշտ չէ, վոր համապատաս-
խանում է աղբեսիայի իրականացման գործում ունեցած նրանց
հնարավորութւոյններին։

Յեւ յեթէ Փաշիստական պետութւոյններն այսօր սոցիալիզ-
մի յերկրի դեմ բացահայտ պատերազմ չեն մղում, ապա վոչ այն
պատճառով, վոր նրանք հաշտվել են սոցիալիզմի հաղթանակի
հետ յերկրագնդի մեկ վեցերորդ մասում, այլ այն պատճառով,
վոր նրանք դեռ պատրաստ չեն այդպիսի պատերազմի համար,
վոր Փաշիստական պետութւոյնների վայրենի աղբեսիվութւոյնը
ապանաղ է առաջացնում հարեան կապիտալիստական յերկր-
ներում, իսկ գլխավորապես այն պատճառով, վոր աճել է ՍՍՀ
Միության պաշտպանունակութւոյնը, վոր նրանք վախենում են
իրենց սեփական ժողովուրդներից։

Կապիտալիստական աշխարհն անցյալում արդեն փորձել է
սվինով ռոչափել մեր յերկրը։ Կարո՞ղ ենք մենք արդյոք մոռա-
նալ կապիտալիստական պետութւոյնների զինված ինտերվեն-
ցիան քաղաքացիական պատերազմի տարիներում, ինտերվենցիա,
վորը նրա նախաձեռնողներին հաղթանակ չբերեց, բայց ձգձգեց
քաղաքացիական պատերազմը, ավելացրեց մեր ժողովրդական
մասսաների տառապանքները և գծվարացրեց մեր սոցիալիստա-
կան շինարարության ավելի արագ թափը։ Կարո՞ղ ենք մենք ար-
դյոք մոռանալ, թե ինչպես այդ պետութւոյնները գենք եյին մա-
տակարարում հակահեղափոխական գեներալներին՝ Դենիկինին,
Կոլչակին, Վրանգելին, թե ինչպես նրանք մեր յերկրն եյին ու-
ղարկում եքսպեդիցիոն կորպուսներ, ինչպես նրանք զրավում

եյին խորհրդային յերկրամասերը։ Կարո՞ղ ենք մենք արդյոք
մոռանալ, թե ինչպես Հեռավոր Արեւելքում ճապոնական ինտեր-
վենտներն եյին անորինում, Ուկրաինայում դերմանական սկու-
պանտները, ինչպե՞ս ոտարերկրյա դորքերը հարձակվում եյին
թե՛ հյուսիսից և թե՛ հարավից, թե՛ Վոլդայի վրա և թե՛ Սի-
բիրում։ Յեւ յեթէ այդ ինտերվենցիան տապալվեց, ապա լու-
պալվեց այն պատճառով, վոր կապիտալիստական պետութւոյն-
ների ուղարկած զինվորները չեյին ուղում կռվել մեր յերկրի
բանվորների ու գյուղացիների դեմ, այդ պետութւոյնների ժողո-
վուրդները ուժասպառ եյին յեղել պատերազմից և դեմ եյին
ինտերվենցիային, իսկ մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները
ոտարերկրյա հափշտակիչների դեմ մղվող կռվում հանդես բե-
րեցին հերոսության հրաշքներ։

Մենք կարո՞ղ ենք արդյոք մոռանալ այն պատերազմը, վորը
կազմակերպել եյին հենց բուրժուական կառավարութւոյնները,
լեհական շլյախաային 1920 թվին հարձակման դրդելով խոր-
հուրդների յերկրի դեմ։ Մեր հակառակորդներին այդ պատե-
րազմն ել նույնպես հաջողութւոյն չբերեց, բայց ուժեղացրեց
իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների և ին-
տերվենցիայի առաջ բերած տնտեսական քայքայումը, յերկա-
րացրեց ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանը և մի շարք
լրացուցիչ զգվարութւոյններ ստեղծեց մեր սոցիալիստական շի-
նարարության վերականգնման շրջանին անցնելու գործում։

Ինտերվենցիայի և խորհրդային-լեհական պատերազմի ա-
վարտումը փոխեց ՍՍՀՄ-ի միջազգային դրութւոյնը։ Բայց այդ
նշանակում էր, արդյոք, վոր կապիտալիստական աշխարհը
հանդիստ թողեց խորհրդային Միությանը։ Բուրժուական կա-
ռավարութւոյնները հարկադրված եյին ժամանակափոխադես
հրաժարվել ուղղակի ռազմական աղբեսիայի միջոցով ՍՍՀՄ-ը
վոչնչացնելու պլաններից, բայց նրանք շարունակում եյին իրենց
պայքարը ուրիշ միջոցներով։ Կապիտալիստական պետութւոյն-
ները մեկը մյուսի հետեից ճանաչեցին ՍՍՀՄ-ը, բայց այս նրանց
չխանդարեց այդ բոլոր տարիներում հյուսելու զինվորապետական
ինտրիգների բարդ ցանց, վորոնց նպատակն էր մեկուսացնել
խորհրդային Միությանը և ավելի շատ արտաքին ու ներքին նոր
զգվարութւոյններ ստեղծել նրա համար։ Դիվանագիտական դա-
վերին ուղեկցում եյին ընդհատակյա նենդութւոյնները։ Բացա-
հայտ պատերազմը փոխարինվեց քողարկված պատերազմով։

Հայկառախտական պետութիւնները խորհրդային տերիտորիա ելին փոխադրում գիւնված բանդաներ, վորոնք հարձակում ելին տեղական գործկոմները վրա, սպանում կուսակցական ու խորհրդային աշխատողներին, պայթեցնում յերկաթուղագծերը, կտրատում հեռագրական ու հեռախոսային լարերը, հրկիւղում ռազմական պահեստները, ավերում խորհտնտեսութիւնները, վոչնչացնում ժողովրդական դուլը, թալանում բնակչութիւնը: Անդրկական զնգապետները կողմից շարժման մեջ դրված բաւմաշները Միջին Ասիայում, յեհական պահնորդական բաժնի սնած պետլորականներն Ուկրաինայում, ճապոնական շտարները ուղարկած խուճուղները Մանջուրիայից, սպիտակ կարելները Ֆինլանդիայից շարունակում ելին «խաղաղութիւն» պայմաններում գործել աշխատ, ինչպես յեթե մեր յերկիրը պատերազմի դրութիւն մեջ լիներ այդ բանդաներն ուղարկած կապիտալիստական պետութիւնների հետ: Կարո՞ղ ենք մենք արդոք մոռանալ խորհրդային յերկրի կապիտալիստական շրջապատման վոճիրների այս արյունալի շղթան:

Կարո՞ղ ե արդոք մեր յերկիրը մոռանալ կապիտալիստական աշխարհի ծողարկված պատերազմի նաւ մյուս ձեւը՝ վնասարարութիւնը: Ոտարերկրյա կապիտալի ստոր գործակալները հեղեղում ելին հանքահորերը, սարքում ելին ավարիաներ, դուրս ելին հանում շարքից ելեկտրակայաններ, փչացնում ելին արտասահմանյան թանգարժեք սարքավորումներ, կազմակերպում ելին մարդկային զոհեր տվող պայթեցումներ, կազմում ելին կամ ակնհայտի անիրական ու չափազանցված, կամ դիտավորյալ կերպով իջեցված պլաններ, և այս բոլորն այն ժամանակ, յերր աշխատավորները սոցիալիստական շինարարութիւն պաթոսով կլանված, հրաշքներ ելին գործում, նվաճելով համաշխարհային արտադրական ունկորդներ: Պարզ չե՞ արդոք, վոր մեր հաջողութիւնները սոցիալիստական շինարարութիւն ջակատում ել ավելի շատ կլինեյին, յեթե չլիներ կապիտալիստական պետութիւնների այդ քայքայիչ գործունեյութիւնը, պետութիւններ, վորոնք իրենց գործակալութիւնը հաւաքադրել ելին հեղափոխութիւն կողմից ջախջախված ազնվականների, վաճառականների, կուլակների, տերտերների դադանացած հետնորդները:

Մենք իրավունք չունեյինք մոռանալու կապիտալիստական շրջապատման մասին, առավել ևս այն պատճառով, վոր հենց վերջին տարիների ընթացքում կապիտալիստական յերկիրներում

Փաշիստական շարժումն աճում եր: Յեթե Փաշիզմի առաջին ալիքը Յեվրոպայում անմիջապես հաջորդեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմի վերջանալուն և հասցրեց Փաշիզմի հաղթանակին Խտալիայում, ապա Փաշիզմի յերկրորդ ալիքը կապված ե գերմանական Փաշիստների իշխանութիւն գլուխ անցնելու հետ 1933 թվին: Գերմանական Փաշիստներից անմիջապես հետո իշխանութիւն գլուխ անցան հայմվերյան տիպի Փաշիստներն Ավստրիայում, 1934 թ. փետրվարի 6-ին փողոց դուրս յեկավ Փաշիստական շարժումը Ֆրանսիայում, աճեց Հենլեյնի շարժումը Չեխոսլովակիայում, Դեղրեյինը՝ Բելգիայում, Մոսկիինը՝ Անգլիայում, «յերկաթե գվարդիան» սկսեց մոլեգնել Ռումինիայում, Փաշիստները սկսեցին շարժվել սկանդինաւյան յերկիրներում:

Իսկ ի՞նչ եր նշանակում Փաշիզմի—թե՛ համաշխարհային բանավորական շարժման և թե՛ խորհուրդների յերկրի այդ ամենակատաղի թշնամու աճումը: Այդ նշանակում եր, վոր կապիտալիզմի աշխարհի և սոցիալիզմի աշխարհի միջև հակասութիւնները ծայրահեղորեն սրվում են, վոր իշխող դասակարգերի մեջ գերակշռութիւն են ձեռք բերում ամենալիտի խաւարամոլները՝ իմպիւ—ի դեմ պատերազմ մղելու կողմնակիցները, վոր խորհուրդները յերկրի դեմ ուղղված աղբեսիայի գործի նախաձեռնութիւնն անցնում ե Փաշիստական պետութիւնների ձեռքը, վոր կապիտալիստական աշխարհի կողմից իմպիւ—ի վրա հարձակում գործելու վտանգը մեծանում ե: Այդ նշանակում եր, վոր աճող Փաշիստական շարժման հանդէպ մենք ամենից ավելի քիչ հիմք ունեյինք հանդստացման անձնատուր լինելու, մենք պետք ե ամենից ավելի լարված զգաստութիւն յերեան բերեյինք կապիտալիստական շրջապատման նկատմամբ:

Իսկ ինչպե՞ս պատահեց, վոր հենց վերջին ժամանակներում մենք սկսեցինք մոռանալ կապիտալիստական շրջապատման մասին:

Դրա պատճառն այն ե, վոր մեր սոցիալիստական շինարարութիւն մեծ հաջողութիւնների աղղեցութիւն տակ մենք սկսեցինք խիստ նվազեցնել կապիտալիստական շրջապատման ուժերը և թերազնահատում ելինք մեր նկատմամբ ստորութիւններ աճելու և մեղ վնասելու նրա հնարավորութիւնները:

Արադ տեմպով աճեց սոցիալիստական արդյունաբերութիւնը, յերկիրը յերկաթ և դրանիտ հագավ, ամրացան կոլոնիալիստական

թյունները, կյանքը դարձավ ավելի լավ, ավելի ուրախ, արդյունաբերական բանվորների ու կոլտնտեսականների միջև յեղած սահմանները ջնջվեցին, ԽՍՀՄ-ի ժողովուրդները սոցիալիստական հասարակութուն կառուցողների միասնական ընտանիքի վերածվեցին, աճեց մասսաների սոցիալիստական գիտակցութունը, ամրացավ մեր յերկրի պաշտպանունակութունը: Ընդարձակվեց խորհրդային մարդկանց դեպի սեփական ուժերն յեղած վստահութունը, իրենց հայրենիքի հանդեպ ունեցած սիրո հսկայական աճման հետ միասին: Ամբողջ աշխարհի շահագործվողների ու կեղեքվողների մեջ ծավալվեց սերը դեպի բոլոր աշխատավորների հայրենիքը: Բայց այստեղից խորհրդային մարդկանց մոտ տրամադրութուն եր աճում, վոր բոլոր դժվարություններն արդեն վերջացել են, վոր ստորջրյա բոլոր խռթերն ու ծանծաղուտներն անց ենք կացել, վոր բոլոր վտանդներն արդեն անցել են, վոր կապիտալիստական շրջապատման բոլոր սպառնալիքները դատարկ բաներ են:

Ձի կարելի աչքաթող անել նաև այն, վոր մեր բոլոր ամենախոշոր հաջողությունները զուգադիպեցին կապիտալիստական աշխարհը հիմնվեր ցնցող համաշխարհային տնտեսական ճգնաժամի զարգացմանը, վոր այն ժամանակ, յերբ մեր սոցիալիստական յերկիրը բուռն թափով առաջ եր ընթանում, կապիտալիստական յերկիրները հետ եյին դնում: 1929 թվից սկսած բնդհուգ մինչև 1923 թիվը, այսինքն տնտեսական ճգնաժամի ամենաստորին կետը, կապիտալիզմի դործերը գնալով ավելի և ավելի վատ եյին ընթանում: Բայց նույնիսկ այն ժամանակ, յերբ կապիտալիստական աշխարհն անցել եր ամենաստորին կետը, ճգնաժամի սոցիալ-քաղաքական ծանր հետևանքները նոր միայն ծավալվում եյին լիակատար չափով: Իսկ այստեղից ծագում եյին տրամադրություններ, թե կապիտալիզմն արդեն մեջքի վրա գետնին և գլորվել, թե նա արդեն ստտկած շուն և, թե հասարակական հարաբերությունների կապիտալիստական թաղանթը պատռելն այնքան ել դժվար բան չե արդեն:

Այդ տրամադրությունները կապիտալիստական յերկիրների կոմունիստական կուսակցությունների տակտիկայում հասցրին Փաշիստական վտանգի թերազնահատմանը և բացահայտվեցին այն բանում, վոր գերմանական վորոշ կոմունիստներ, յերբ Փաշիստներն արդեն իշխանության գլուխ եյին անցնում, հայտարարեցին, թե Փաշիզմի զարգացմանն արդեն վերջ և գրված, թե

Փաշիզմն արդեն ջախջախված և: Կապիտալիզմի ուժերի և հնարավորութունների այս թերազնահատումը նույնպես վնասակար եր, ինչպես և այդ հնարավորությունների դերազնահատումը, վորն իր արտահայտությունն եր դտել «կազմակերպված կապիտալիզմի» ամբողջովին կեղծ, կապիտուլանտական թերորիայում: Բայց կապիտալիզմի չսպառված հնարավորությունների այս թերազնահատումը տանում եր վոչ միայն դեպի Փաշիզմի նկատմամբ ունենալիք դդոնության թուլացումը, այլ և դեպի պատերազմի վտանգի թերազնահատումը: Կապիտալիզմն ել ինչպես խճճվի պատերազմի մեջ, յերբ նա մահամերձ դրության մեջ և: Կապիտալիստական պետություններն ել ինչպես պատերազմեն, յերբ նրանց դործերն այդպես խճճված են: Կապիտալիստական հասարակարգն իր արմատում փտում և և կապիտալիստական յերկիրների աշխատավորները նրան անդեն կիսեղեն:

Բայց չե՞ վոր այդ ճիշտ չե: Ծիշտ չե նախ այն պատճառով, վոր թեև կապիտալիզմը պատմականորեն դատապարտված ուժի մեջ և, թեև կապիտալիզմի զարգացման ընդհանուր դիծը իրապես դեպի նրա դրության վատացումն ու դեպի նրա անխուսափելի կործանումն և տանում, այնուամենայնիվ կապիտալիզմի դրության մեջ յեղել են, կան և կլինեն ժամանակավոր լավացումներ: Բավական և թեկուզ հիշատակել կապիտալիստական յերկիրներում ներկայումս դոյություն ունեցող տնտեսական կոնյունկտուրայի զգալի լավացումը: Նրանցից միքանիստ արտադրությունը վո՛չ միայն մինչճգնաժամյան, այն և՛ 1929 թվի մակարդակին և հասել, այլ և նրանից անցել և: Այդ չի բացատում, այլ ընդհակառակը, յենթադրում և տնտեսական նոր ճրդնաժամի հասունացում, բայց տնտեսական այդ աշխուժացումն անվիճելի փաստ և այսոր:

Յերկրորդ, այդ ճիշտ չե այն պատճառով, վոր կապիտալիզմի դրությունը վորքան ավելի խճճված դառնա, կապիտալիստական պետություններն այդ խճճված դրությունից դուրս գալու յերքն այնքան ավելի ուժգնորեն են փնտռելու պատերազմների մեջ: Իսկ քանի վոր ամենախճճված դրությունը Փաշիստական պետություններումն և, ապա հենց այդ պետություններն ել առավելադույն հակումն են հանդես բերում դեպի ռազմական ավանյուրիզմը: Ձե՞ վոր ցարիզմը ռուս-ճապոնական պատերազմով ցանկանում եր հետաձգել իր կործանումը: Ձե՞ վոր ճապոնիան իր ներքին հակասություններից դուրս գալու յերքը Ձինաս-

տանի դեմ պատերազմելու մեջ է փնտռում: Չե՞ վոր խտաշ-
կան Փաշիգմն իր ներքին դժվարություններից ազատվելը փնտ-
ռում էր Հարեչտանի դեմ պատերազմելու մեջ: Չե՞ վոր դեր-
մանական Փաշիգմը ձգտում է վառել պատերազմի ջահը աշխար-
հի վրա, վորպեսզի խուսափի իր լիակատար սնանկությունից:

Խորհրդային մարդկանց վրա հանգստացուցիչ կերպով եյին
ներգործում մեր խաղաղության քաղաքականության հաջողու-
թյուններն էս: Խորհրդային պետության խաղաղության քաղա-
քականությունը խաղաղության ամենահետևողական քաղաքա-
կանությունն է, վորովհետև այն կիրառում է սոցիալիզմի յեր-
կիրը, այսինքն այնպիսի հասարակարգ ունեցող յերկիրը, վոր-
տեղ վոչնչացված է մի դասակարգի շահագործումը մյուսի կող-
մից, մի ազգի ճնշումը մի այլ ազգի կողմից, վորտեղ չեն կա-
րող տեղ գտնել վոչ տերիտորիալ զբաղումներ, վոչ ել իմպերիա-
լիստական պահանջներ:

Խորհրդային յերկրի խաղաղության քաղաքականությունը
հաջողություն ունեցավ, վորովհետև այդ քաղաքականությունն
այս կամ այն չափով պաշտպանում էր նույնիսկ կապիտալիստա-
կան պետությունների մի մասը: Վոմանք—մեծ պետություններն
—այդ քաղաքականությունը պաշտպանում եյին, վորովհետև
ներանք շահագործված չեյին աշխարհի նոր վերաբաժանման գոր-
ծում. մյուսները—փոքր պետություններն—այն պատճառով, վոր
չեյին ցանկանում նոր պատերազմում կորցնել իրենց անկախու-
թյունը, յերրորդ խումբն այն պատճառով, վոր վախենում էր
պատերազմի հետևանքով առաջ գալիք հեղափոխական ցնցումնե-
րից: Բայց խաղաղության խորհրդային քաղաքականության հա-
ջողությունն ապահովված էր ամենից առաջ նրանով, վոր այդ
քաղաքականությունը համապատասխանում էր բոլոր յերկիրների
ժողովուրդների ակնկալություններին:

Խաղաղության մեր քաղաքականությունն սկզբունքորեն այլ
է, քան բուրժուա-դեմոկրատական այն գործիչներինն ու կուսակ-
ցություններինը, վորոնք թեպետ չեն ցանկանում նոր պատե-
րազմներ, բայց կապիտալիզմի հողի վրա յեն կանգնած: Այդ
պատճառով Խորհրդային յերկրի խաղաղության քաղաքականու-
թյանն ամենալայն աջակցություն են ցույց տալիս կապիտալիս-
տական յերկիրների ժողովրդական մասսաները, վորոնք ժողո-
վուրդների միջև խաղաղության ամենապատահելի հենարանը լի-
ակատար հիմունքով համարում են ԽՍՀՄ:

Ամբողջ աշխարհի ժողովրդական մասսաների այդ աջակցու-
թյան, դեպի Խորհրդային յերկիրը ԽՍՀՄ-ի ժողովուրդների տա-
ծած խոր սիրո, մեր սոցիալիստական կացութաձևի անընդհատ
աճող հղորդության և մեր պանծալի Կարմիր բանակի վրա հեն-
վելով եր միայն, վոր խորհրդային կառավարությունը կապիտա-
լիստական պետություններին, և առաջին հերթին Փաշիստական
ադրեսորներին, կարողացավ խանդարել հրեշավոր նոր պատե-
րազմ սկսելու:

Անցյալ տարիների ընթացքում խաղաղության գործը մեկ
անգամ չէ, վոր կարծես մաղից կախված է յեղել: Ճապոնական
ռազմամուկներն ու գերմանական Փաշիստները մեկ անգամ չէ,
վոր այնպիսի կոնֆլիկտների պրովոկացիա յեն սարքել, վորոնք
կարող եյին հասցնել պատերազմի, յեթե չլինեիր խորհրդային
կառավարության դեպի խաղաղության գործն ունեցած անխախտ
անձնվիրությունն ու տոկունությունը, իսկ գլխավորը՝ ռազմա-
կան այն հղորդությունը, վորն ստեղծել է Խորհուրդների յերկի-
րը՝ աշխատավորների հայրենիքը պաշտպանելու համար: Այս-
տեղից մեր մարդիկ հետևություն արին՝ յեթե մենք մեկ անգամ
կարողացանք Փաշիստական ադրեսորների ձեռքերին խփել ու
ներանց սանձահարել, ապա ինչո՞ւ այդ չափիտի հաջողվի անել
յերկրորդ և յերրորդ անգամ. քանի վոր խորհրդային կառա-
վարության իմաստության չնորհիվ խաղաղությունը հաջողվեց
պահպանել այսօր, նշանակում է այդ կհաջողվի նաև վաղը:
Պատերազմի վտանգի գիտակցության սրությունը մի փոքր թու-
լանում էր, մարդիկ կարծես թե դադարում եյին նկատելուց, վոր
պատերազմի ու խաղաղության գործը կախված է վոչ միայն
մեզնից, այլ և այն կառավարություններից, վորոնք մենք դի-
մում ենք մեր խաղաղության առաջարկներով: Իսկ այդ կառա-
վարությունները խաղաղության հանդեպ իրենց կամքը չհայտա-
բերեցին: Մի՞թե Հիտլերի, Գերբեյսի արտասանած զառանցա-
կան, հիստերիկական ճառերը Նյուրնբերգի համագումարում
ցույց չեն տալիս, թե պատերազմի և խաղաղության հարցերում
Խորհրդային Միությանն ինչ տեսակ կոտորազենությունի հետ է
հարկ լինում գործ ունենալ: Մի՞թե խորհրդային կառավարու-
թյունը չի առաջարկել Ճապոնիային չհարձակվելու պայմանադիր
ստորագրել, բայց ճապոնական կառավարությունը մերժել է
այդ առաջարկությունը: Մի՞թե խորհրդային կառավարու-
թյունն Ադգերի Լիգայում հանդես չի յեկել ընդհանուր դինա-

թափման առաջարկով. բայց կապիտալիստական յերկիրները մերժել են խորհրդային յերկրի այդ նախաձեռնությունը:

Վերցնենք, որինակ Իսպանիան: Ամբողջ աշխարհը դիտե, վոր իսպանական կառավարությունը արեց այն ամենը, ինչ մարդկային ուժերի սահմաններումն է, վորպեսզի ղերմանական ու իսպանական ինտերվենտներին վոչ մի առիթ չտա հարձակվելու իսպանական ժողովրդի վրա: Բայց և այնպես, Գերմանիայի և Իտալիայի Ֆաշիստական կառավարությունները ներխուժեցին Իսպանիա առանց վորևէ արտաքին առիթի, առանց վորևէ հայտարարության՝ պատերազմի մասին:

Բայց ասում են, թե իսպանական ժողովրդի հերոսական պայքարն ընդդեմ Ֆաշիզմի՝ սթափեցուցիչ ազդեցություն է ունեցել Ֆաշիստական կառավարությունների վրա, վոր Գվադալախարան փոքր ինչ չափավորել է ղերմանական և իտալական ինտերվենտների ռազմատենչ տապը, վոր այդ ինտերվենտները, բաղիվելով իսպանական սպառազինված ժողովրդի հետ, սկսել են համոզվել թե՛ այն բանի մեջ, վոր լուրջ պատերազմի համար իրենք բավականաչափ պատրաստված չեն, և թե՛ Ֆաշիստական ռեժիմի ներքին թուլության մեջ: Ասում են, թե ինտերվենտների պատերազմական անհաջողություններն անբավականություն են ստեղծում թիկունքում՝ իրենց սեփական յերկիրներում: Ասում են, թե մենակ Գերմանիայում և Իտալիայում չէ, վոր աճում է մասսաների անբավականությունը, թե ժողովրդական մասսաները մեծ հուզմունքով են բռնված Լեհաստանում, թե պիլսոնալիստիկանների ազդեցությունն արագորեն հալչում է, թե Լեհաստանն սկսում է տենդահարվել: Ասում են, թե հանդիսո չէ նաև Ճապոնիայում, վորտեղ սպաները մինիստրներ են սպանում, վորտեղ զորամասերը պուտչեր են սարքում, վորտեղ նույնիսկ պահպանողական կուսակցությունների ներկայացուցիչները, արտացոլելով յերկրում յեղած խոր դժգոհությունը, անընդհատ զրոհում են կառավարության վրա: Իսկ այստեղից յեղբակացում են, թե Ֆաշիստական կառավարություններն այդպիսի անկայուն թիկունքներով չեն կարող վո՛չ պատերազմ սկսել, վո՛չ էլ կռվել:

Այդ ճիշտ չէ: Ֆաշիստական կառավարությունների թիկունքի անկայունությունն առայժմ դեռ այնպես չէ, վորպեսզի նրանք չկարողանային պատերազմ սկսել: Այդպիսի թիկունքով պատերազմներ սկսում են, այդպիսի թիկունքով պատերազմ մղում են,

բայց այդպիսի թիկունքով յերբեք չեն հաղթում, այդպիսի թիկունքով պատերազմը վիշապնում են ժողովուրդները, զուգընթացաբար հաշիվ տեսնելով իրենց կառավարությունների հետ ևս:

Այնուհետև ասում են, թե վերջին ամիսների ընթացքում կապիտալիստական բոլոր յերկիրներում Ֆաշիստական շարժումը թուլանում է, թե իսպանական ժողովրդի հաղթանակը ծանր հարված կհասցնի Ֆաշիզմի պրեստիժին, կնպաստի հակաֆաշիստական շարժման ավելի հզոր ծավալմանը: Այդ ճիշտ է: Բայց սխալ կլինե՞ր այստեղից յեղբակացնել, թե դրանից պատերազմի վտանգը նվազում է: Շահագործողական դասակարգերի համար պատերազմը ռեակցիայի ուժեղացման միջոց է և Ֆաշիստական շարժման զարգացմանը նոր զարկ տալու միջոց:

II

Միջազգային ներկա ամբողջ իրադրությունն անցնում է նոր պատերազմի ուժեղացրած նախապատրաստման նշանաբանի տակ: Այդ է ասում թե՛ կապիտալիստական յերկիրները սպառազինումների աճումը, թե՛ ամենից առաջ Ֆաշիստական պետությունների սպառազինումների աճումը: Այդ է ասում կապիտալիստական բանակների տեխնիկական վերասպառազինումը, Ֆաշիստական պետություններում անցկացվող՝ քաղաքացիական բնակչության ռազմականացումը, տնտեսական ավտարկիայի քաղաքականությունը, այդ է ասում Ֆաշիստական հետախուզությունների լրտեսական աշխատանքի ուժեղացումը: Այդ է ասում նույնպես և տրոցկիստների՝ վերջին ժամանակամիջոցում բացված լրտեսական-դիվերսիոն վնասարարական դործունեությունը: Տրոցկիստների համադործակցությունը Ֆաշիստների հետ գոյություն է ունեցել արդեն մի շարք տարիներ: Այդ բոլոր հրապարակային չէր: Այդ կարելի յեր նկատել քաղաքական սուր հայացքով, բաղդատելով իրար նրանց քաղաքական հիմնական դիրքավորումները ԽՍՀՄ-ի, պատերազմի և խաղաղության, բանվորական շարժման միասնության, հակաֆաշիստական շարժման բանվորական միասնական ճակատի և ժողովրդական ճակատի շարժման նկատմամբ: Պյատակովի և մյունսների վերջին դատավարությունը ցույց տվեց, վոր Ֆաշիզմի հետ տրոցկիզմի ունեցած քաղաքական այդ համադործակցության հետևում ավելին է թագնվում, այն է՝ Տրոցկու ուղղակի, անմիջական համաձայ-

նությունը ֆաշիստական ղեկավարների հետ՝ տրոցկիստական հակահեղափոխական կազմակերպությունների կազմերի միջոցով թորհուրդների յերկրի դեմ քայքայիչ աշխատանք կատարելու մասին: Դատաւարութիւնը ցույց տվեց, վոր տրոցկիզմը փաշիզմի լրտեսական-դիվերսիոն գործակալութիւնն է դարձել:

Պատմութիւնը դիւսապտույտ ունեղատութեան և դարչելի դավաճանութիւնների շատ որինակներ է ճանաչում: Մուսոլի-նին, նախքան ֆաշիստական առաջնորդ դառնալը, կանգնած էր Խտալիայի սոցիալիստական կուսակցութեան ձախ թեւում: Պիլ-սուդակին ՊՊՍ-ի պարագլուխն էր, ֆրանսական ֆաշիստ Երվին «Թունդ» հակամիլիտարիստ էր և II Ինտերնացիոնալի Շտուտ-գարտի 1907 թ. կոնգրեսում պահանջում էր, վորպեսզի բանի-րական կուսակցութիւնները պատերազմ հայտարարելուն պա-տասխանեն հեղափոխութեամբ: Բայց և այնպէս դավաճանութեան այդ սերիայից տրոցկիստական դավաճանութիւնը ընկելում է իր հրեշավորութեամբ:

Այդ տիպի դավաճանութիւն կարող էր հասունանալ միայն մոնոպոլիստական կապիտալիզմի ներման դարաշրջանում, բան-վորական շարժման դեմ, կառուցվող սոցիալիզմի յերկրի դեմ բուրժուազիայի ծայրահեղ դադանացման և ֆաշիստական ուսալ-ցիայի կատաղի խրախմանքի դարաշրջանում: Տրոցկիստական հայտնի «Կլեմանսոյի թեզիսն» արդեն ցույց էր տալիս, թե դե-պի վոր կողմն է զարդանում տրոցկիզմը: Կապիտալիզմի ռես-տավրացիայի ծրագիրը տրոցկիզմը հարադատ դարձրեց ֆաշիզ-մին: Յեւ թանի վոր տրոցկիզմը յերկրի ներսում պաշտպանու-թիւն ակնկալել չէր կարող, նա հենարան էր փնտռում դրսից: Այստեղից է առաջացել Տրոցկի և տրոցկիստների դաշինքը ճա-պոնական ռազմամուշների և գերմանական ֆաշիզմի հետ: Բայց դաշինքը ֆաշիստական պետութիւնների հետ կարող էր գնվել տերիտորիալ գիջումներով: Այստեղից է բխում Տրոցկի դիրեկ-տիվն իր գործակալներին՝ թորհուրդային յերկիրն անդամատելու մասին: Տրոցկին ու նրա գործակիցները տեսան, վոր իրենք չեն կարող սասանել խորհրդային իշխանութիւնը, վորին անվերապա-հորեն պաշտպանում են ԽՍՀՄ-ի ժողովրդական մասսաները: Այս-տեղից է բղխում պատերազմին տալիքները: Այստեղից է առաջ դալիս նաև թորհուրդների յերկրի պարտութեան և ֆաշիստական պետութիւնների հաղթանակի կուրս վերցնելը: Այստեղից է ծա-ղում «դաշնակցի» պատվերի համաձայն կատարվող տեւորը,

վնասարարութիւնը, լրտեսութիւնն ու դիվերսիան, «դաշնա-կից», վորը պահանջում է վոչ թե խոստումներ ու խոսքեր, այլ կեղտոտ ու ստոր դործեր: Սոցիալիզմի հանդեպ դադանային չա-րութեամբ բռնված, տրոցկիզմը գլորվեց հակահեղափոխական բանդիտիզմի աղբահորը:

Ռուսական սպիտակ-գվարդիականներն եմիգրացիայում դեռ ալիւլի առաջ ելին բռնել այդպիսի ուղի, նրանք այժմ կապիտա-լիստական աշխարհի բոլոր հետախուզութիւնների համար կադ-րեր են մատակարարում: Չկա այնպիսի կեղտոտ դործ, վորը հանձն չառնէին մարդկային կերպարանքը կորցրած, վաճառված սպիտակ-գվարդիական սրիկաները: Նրանք Շանհայում ծառա-յում են վորպէս ճապոնական լրտեսներ, նրանք տանջում են կո-մունիստներին ռուսական սիգուրանցայում, նրանք սարքում են կեղծ «կոմիտերնական» փաստաթղթեր Գերմանիայում, նրանք բանվորներին լրտեսում են Անգլիայում, նրանք տեւո-րիստական մահափորձեր են կազմակերպում՝ ընդհուպ մինչև հանրապետութեան կըրեզիդենտի սպանութիւնը Փրանսիայում, նրանք գողանում են պաշտպանական նշանակութիւն ունեցող դադանի փաստաթղթեր Ամերիկայում: Նրանք ամեն տեղ են, վորտեղ մարդկային արյան հոտ է դալիս:

Տրոցկիզմը միեւնոյն տրորված ճանապարհով ընթացալ: Տրոցկիստների ձեռքերը չաղաւալած են մեր կուսակցութեան կող-մից սիբված Ս. Մ. Կիրովի—բանվոր դասակարգի այդ ալանա-վոր տրիբունի արյունով, ոտարերկրյա հետախուզութիւնների առաջադրանքներով, գնացքներ խորտակելու միջոցով սպանված կարմիր-բանակայիներին արյունով, վնասարարական պայթեցում-ներին դոհ դարձած բանվորների արյունով: Քիմիական արդյունաբերութեան, Սիբիրի յերկաթուղային մալիստրալի թո-ղունակութեան մասին ֆաշիստական հետախուզութիւններին գադանի տեղեկութիւններ հաղորդելը—նույնպէս տրոցկիստների ծառայութեան ցուցակումն է: Տրոցկիզմը սխտեմի յե վերածել յերկերեսանիութիւնը, խաբէյութիւնը, կեղծավորութիւնն ու փարիսեցիութիւնը: Յեւ միանգամայն հասկանալի յե, վոր այդ դավաճանական աշխատանքի համար նա կարող էր ռեզերվներ գտնել լիկվիդացիայի յենթարկված շահագործողական դասա-կարգերի հակահեղափոխական թափթիւղիների մեջ միայն:

Բայց վորոհք են տրոցկիզմի ռեզերվները կապիտալիստա-կան յերկրներում:

Կապիտալիզմի յերկիրներում այդ ռեզերվները թվական տեսակետից նույնպես խոշոր չեն: Դրանք մասսաների մեջ արմատներ չունեցող առանձին խմբեր, խմբակներ ու խմբակիկներ են: Նրանք մասսաներ չեն տեսել այնպես, ինչպես իրենց ականջները, վորովհետև դրանցից ով կարող եր յենթարկվել տրոցկիստների կողմից ՆՍՀՄ-ի դեմ, կոմկուսակցության դեմ մղած հակահեղափոխական ագիտացիային, Փաշկովը նրանց արդեն ջուղե-հավաքել է: Բայց այդ խմբակիկների մեջ «առաջնորդների» ու «հոսանքների» գերատաղրություն կա: Այստեղ են ձգտում շուտափուլ ջադաքական կարյերայի մասին յերազող ավանտյուրիստական տարրերը, վորոնք բանվորական կազմակերպություններում, կուսակցական վորոշ կարգապահության առկայությամբ, իրենց լավ չեն զգում: Այն ամենը, ինչ վոր կեդոտոության, անվայելուչ արարմունքի, վոստիկանության հետ կապ ունենալու և պրովոկացիայի համար դուրս ե գցված կոմունիստական շարժումից, ձգտում ե դեպի տրոցկիզմ: Այստեղ ջադաքական շուկերները, գեստապոյի գործակալները և գաղափարական տոհմ ու ցեղից դուրկ, բայց Փաշիստական կերպարանքի սուբյեկտները հերթով իրար են հաջորդում:

Բայց բանի եյությունն այդ խմբերը չեն, այլ այն ե, թե ո՛վքեր են կանգնած նրանց հետևում: Պրոլետարիատի դիկտատուրայի մեր յերկրում տրոցկիզմը վոշ մի հենարան չունի: Այլ բան ե կապիտալիստական յերկիրներում: Այնտեղ տրոցկիզմի թիկունքում կանգնած են Ֆինանսական կապիտալի ամենից ռեակցիոն, ամենից շովինիստական, ամենից իմպերիալիստական տարրերը: Կապիտալիստական յերկիրներում տրոցկիզմը շարժվում ե այդ տարրերի հրահանգով: Տրոցկուն ռեկլամում ե ամբողջ Փաշիստական մամուլը: Հրրատի Փաշիստական լրագրային հայտնի կոնցերնն Սմերիկայում՝ Տրոցկու համար բաց ե առնում իր լրագրային հրատարակությունների սյունակները: Տրոցկու ստորաքարշ, զրպարտիչ գրքերն ուսգնորեն տարածում են ամենառեակցիոն հրատարակչությունները: Տրոցկուն սնող ուժը Հիտլերն ե, վորին Տրոցկին հարկավոր ե բոլշևիզմի դեմ կռվելու համար:

Վորեւ մի տրոցկիստ, Սուվարինի նման՝ Ֆրանսիայում լույս ե տալիս Փաշիստ Դորիոյի և գնդապետ Դե լյա Ռոկի անդրադարձած լույսով: Իսկ Սուվարինի, Դորիոյի և Տրոցկու հետևվում, ինչպես և Դե լյա Ռոկի ու Հիտլերի հետևում կանգնած

ե Ֆինանսական կապիտալը: Հենց այդ պատճառով ել բանվորական շարժման համար տրոցկիզմը ավելի մեծ վտանգ ե ներկայացնում կապիտալիստական յերկիրներում, քան մեր յերկրում, վորտեղ կապիտալիզմը վոչնչացված ե:

Կապիտալիզմի յերկիրներում բանվորական կազմակերպությունների համար տրոցկիզմի վտանգը կրկնապատկվում ե նաև նրանով, վոր այնտեղ տրոցկիզմը խաղում ե ձախ Ֆրազով, վորը կարող ե մոլորության մեջ գցել արմատականորեն տրամադրված վորոշ տարրերի:

Հայտնի յե, վոր ՆՍՀՄ-ի և սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերած նրա վիթխարի հաջողությունների դեմ ուղղված պայքարի միջոցով տրոցկիզմին չի հաջողվում վորսալ կապիտալիստական յերկիրների բանվորներին: Այս տրոցկիզմի ամենաթույլ տեղն ե, վորտեղ նրա Փաշիստական ականջները դուրս են ցցվում միանգամայն պարզորոշ կերպով. բայց միասնական ու ժողովրդական ձեռքով շարժումը «ձախից» ժուլիկաբար քննադատելով՝ տրոցկիզմն ավելի հեշտությամբ կարող ե կողմնակիցներ հավաքագրել: Այստեղ հարկավոր ե բացատրական մեծ աշխատանք ստանել տրոցկիստների պրովոկատորական գործունեյությունը մերկացնելու ուղղությամբ, տրոցկիստների, վորոնք ուզում են Փաշիզմին՝ բանվորական շարժումը ջախջախելու փորձերում:

Վերցրեք Ֆրանսիան: Այստեղ բանվոր դասակարգն անցյալ տարի ամառը գործադուլային հզոր շարժումով իր նյութական դրության բարելավման գործում լուրջ հաջողությունների հասավ: Ֆրանսիայում դեռևս շարունակվող տնտեսական ճգնաժամի պայմաններում բանվոր դասակարգը բուրժուազիայից ինչեց աշխատավարձի մինչև 30 տոկոսի հավելում, 40-ժամյա բանվորական շաբաթ, ձեռնարկատերերի կողմից վճարվող յերկշաբաթյա արձակուրդ, կոլեկտիվ պայմանագրեր, ընտրովի լիալորենների ինստիտուտ ձեռնարկություններում, ել չենք խոսում ավելի մանր հաջողությունների մասին: Ֆրանսական կապիտալը բուրժուազիան այդ ժամանակից ի վեր ել չի հանդստանում: Նա ուղղակի պրովոկացիաների դիմելով վորձում ե դեթ մասնակիորեն հետ վերցնել բանվոր դասակարգի այդ նվաճումները: Ֆրանսական բուրժուազիան պրովոկացիա սարքելու միջոցով ձգտում ե բանվորների առանձին խմբերին մղել դեպի նոր յելույթներ և նրանց կողմից ձեռնարկությունների գրավումը, վորպեսզի

42
171

բանվորներին մասսամաս ջախջախի և «անարխիան» պատրվակ բռնելով լուսաւորով հարկադրի բանվորներին ընդունելու աշխատանքի նախկին պայմանները:

Ուլբե՞ր են ողնում Փրանսական բուրժուազիային իրագործելու չարանենդ այդ պլանները: Տրոցկիստները: Այդ նրա՛նք են, վոր ձեռնարկատերերի վարձու գործակալները հետ միասին ջանում են մղել բանվորներին դեպի ցաքուցրիվ, անկազմա-կերպ յեւույթներ, վորպեսզի գործարանատերերին հնարավորութիւն տրվի խախտելու իրենց ստորագրած համաձայնութիւնները:

Կամ ել այլ որինակ՝ կապված այսպես կոչված Փրանսական սոցիալական կուսակցութեան հետ, վորը Փրանսական կառավարութեան կողմից ցրված Փաշիստական ջոկատները յերկրորդ հրատարակութիւնն են: Այժմ բանվորական մասսաները բռնն կերպով պահանջում են ձերբակալել Դորիոյին և Դե Լյա Ռոկին և ցրել նրանց Փաշիստական կուսակցութիւնը, վորը հարմարվել է «լեգալութեան» պայմաններին: Փրանսական բուրժուազիան ցանկանում է, ինչ ել վոր լինի, պաշտպանել Փաշիստական կազմակերպութիւններին և գլուխ բերել կոմունիստական կուսակցութեան ցրումը: Փրանսական ամբողջ ռեակցիան ճիշդ ու ջանք չի խնայում կոմունիստների դեմ արյունալի ընդհարումների պրովոկացիա սարքելու: Նրան այդ ընդհարումները հարկավոր են ժողովրդական ճակատի միասնութիւնը վիժեցնելու, կոմունիստական կուսակցութեանը մեկուսացնելու, մանր բուրժուազիայի և գյուղացիութեան տատանող խավերին կոմկուսակցութեան դեմ զրգռելու համար: Այստեղ ել տրոցկիստները հանդես են գալիս «միասնական ճակատով» Փաշիստների հետ: Այդ տրոցկիստներն են, վոր Դորիոյի և Դե Լյա Ռոկի դիրեկտիվով, Փաշիստական պրովոկատորների հետ միասին բանվորներին զրգռում են դեպի զինված ընդհարումներ: Այդ նրա՛նք են, վոր Փաշիստների ու Փրանսական վոստիկանութեան հետ միասին Փարիզի Կլիշի արվարձանում սարքեցին վերջերս տեղի ունեցած պրովոկացիոն դեպքերը, վորոնց ընթացքում սպանվեցին ու վիրավորվեցին շատ բանվորներ:

Ուլբե՞ր են այժմ հանդես գալիս Փրանս-խորհրդային պակտի դեմ: Հիտլերը, Դորիոն և նրանց հետ միասին Փրանսական ռեակցիայի ամենասև ուժերը: Փրանս-խորհրդային պակտին, վորն ողնում է խաղաղութեան գործի ամրացմանը, ռեակցիոն

ուժերը հակադրում են Փրանսական ռեակցիայի համաձայնութիւնը Հիտլերի հետ, մի համաձայնութիւն, վորը պատերազմի գործիք է ծառայելու:

Այստեղ ել տրոցկիստները ռեակցիայի կողմն են՝ ընդդէմ խաղաղութեան ուժերի:

Տրոցկիստները Փաշիզմի ոժանդակիչների ու գործակալների նույն այդ դերը կատարում են նաև Իսպանիայում: Հայտնի յե, վոր իսպանական ժողովրդի կողմից խռովարար գեներալների և զերմանական ու իտալական ինտերվենտների ուժերին հաղթելու ամենակարևոր պայմանը ժողովրդական ճակատի միասնութեան պահպանումն է: Փրանկոյի գործակալներն անխոնջ աշխատում են այն բանի վրա, վորպեսզի մասսաների աչքում վարկաբեկեն Իսպանիայի ժողովրդական ճակատը, ներսից պայթեցնեն այն, վորպեսզի բարոյալքեն ու քաղաքականապես զինաթափ անեն ժարտնչող իսպանական ժողովրդին: Նրանք այսօր անարխիստներին զրգռում են կոմկուսակցութեան դեմ, վաղն զդուշորեն չռաւում են, թե չի՞ կարելի, արդէյոք, ժողովրդական ճակատից պոկել բասկյան նացիոնալիստներին, ապա սոցիալիստական կուսակցութեան ներսում կոնֆլիկտներ են բորբոքում, լուրեր են քաց թողնում, ստում են, անվերջ դրաւարտում: Այստեղ ել բանը յոյա չի դնում առանց տրոցկիստների, վորոնք ժողովրդական ճակատի վրա կատարած իրենց անպատկառ հարձակումներով և իրենց պրովոկատորական գործողութիւններով ջանում են ողնել Փրանկոյին՝ վիժեցնելու ժողովրդական ճակատի միասնութիւնը:

Ժողովրդական ճակատի բոլոր կուսակցութիւններն ու կադմակերպութիւնները պայքարում են հանուն միասնական ժողովրդական բանակի, մարտական գործողութիւնների միասնութեանը խանդարող կուսակցական առանձին ջոկատները լիկվիդացիայի յենթարկելու համար: Բայց դենբրալ Փրանկոյին հարկավոր են կազմալուծող պարտիզանականութիւն հանրապետական բանակում, դիսցիպլինայի բացակայութիւն, քաոս և անկարգութիւն: Տրոցկիստները «հինդերող գորսայունի» գործակալներին հետ ձեռք ձեռքի տված, բանակում և թիկունքում կատարած իրենց քայքայիչ աշխատանքով ոժանդակում են դենբրալ Փրանկոյի ստոր պլանների իրագործմանը:

Գերմանական և իտալական ինտերվենտներն իսպանական ժողովրդի դեմ մղած իրենց պատերազմն արդարացնելու հա-

մար ճշում են այն մասին, թե Իսպանիայում «կոմունիստական հեղափոխություն» և կատարվում, թե ինտերնացիոնալ բրեղադները, վորոնք կռվում են հողուտ իսպանական ժողովրդի, պատրաստում են Իսպանիայի «ստրկացումը» կոմիտեներին կողմից: Հիտլերի տրոցկիստական գործակալներն Իսպանիայում միևնույն ազդեցության են մղում: Բուրգուի և Սալամանկայի Փաշիստական թերթերը համակրանքով արտատպում են տրոցկիստական հոգվածները, վորոնք ըստ վոճի ու բովանդակության չեն տարբերվում գեներալ Ֆրանկոյի հոգվածներից:

Զինատանում, վորտեղ հակառակ գոմիշանի ամենառեակցիոն պարազուլներին դիմադրության, մեծ դժվարություններ կաղմվում և համադրային ճակատ ընդդեմ ճապոնական հափշտակիչներին, տրոցկիստները հանդես են գալիս վորպես չինական համադրային ճակատի կատարի թշնամիներ՝ ողնելով ճապոնական ռադիամոմոններին, վորոնք շահագրգռված են չինական ազդային ուժերը ջլատելու գործում, վորպեսզի հետագա զավթումներ անեն և չինական տերիտորիայում խայտառակություններ կատարեն:

Տրոցկիզմի դեմ մղվող պայքարն ել ավելի մեծ զգոնություն և պահանջում կապիտալիստական յերկիրներին բանվորական կազմակերպություններից, վորովհետև տրոցկիզմը Փաշիզմի մոտ կատարում և հատուկ առաջադրանքներ, վորոնք Փաշիզմն ինքն ի վիճակի չէ կատարելու: Տրոցկիզմը շարաշահում և թախսացող սոցիալ-դեմոկրատական բանվորների տրամադրությունները, ջանալով նրանց ուղղել հակահեղափոխական հակախորհրդային հունի մեջ: Տրոցկիստները վերջին ժամանակներս ուժեղորեն ձգտում են թափանցել անարխիստական խմբերի, սոցիալ-դեմոկրատական «ձախ» խմբավորումների մեջ և իրենց համար վորոշ հենարան ստեղծել այնտեղ: Այդպիսին և կիսաանարխիստացող Մարսո Պիլերի խումբը՝ Ֆրանսիայում, Աշխատանքի ազդային կոնֆեդերացիայում յեղած անարխիստական տարրերն՝ Իսպանիայում, Անկախ բանվորական կուսակցությունն՝ Անդլիայում, Յերիտասարդ սոցիալիստական զվարդիան՝ Բելգիայում, Ամերիկայում՝ այդ այն և, ինչ մնացել և ամերիկական սոցիալիստական կուսակցությունից և այլն: Անհրաժեշտ և նշել, վոր բոլոր այն խմբերում ու կազմակերպություններում, ուր տրոցկիզմին հա-

ջողվում և սողոսկել, անխուսափելիորեն սկսվում և այդ կազմակերպությունների քայքայումն ու բաժանումը «Ֆրակցիաների», միմյանց դեմ թշնամի «հոսանքների», սկսվում և այդ կազմակերպությունների ալլասերումն ու մասսաներից կտրված աղանդների վերածվելը, վորի ցայտուն որինակը կարող և ծառայել անդլիական այսպես կոչված Անկախ բանվորական կուսակցությունը և հատկապես Ամերիկայի սոցիալիստական կուսակցությունը, վորը վերջին միջանի տարիների ընթացքում իր թվական կազմը 16 հազարից իջեցրել և մինչև 7 հազար անդամի:

Միանգամայն ակներև և, վոր տրոցկիզմի այդ վնասարարական դերը բանվորներին ուշադրությունից չի վրիպում: Ներանք սկսում են հասկանալ, վոր տրոցկիզմի դեմ մղվող պայքարը վո՛չ միայն կոմունիստների, այլ նաև բոլոր բանվորական կազմակերպությունների գործն և, կազմակերպություններ, վորոնք շահագրգռված են, վորպեսզի իրենց պաշտպանեն Փաշիզմի տրոցկիստական գործակալության քայքայիչ աշխատանքից:

Բանվորական մասսաները չեն կարող չտեսնել, վոր այն ժամանակ, յերբ իրենք անձնազոհ կերպով պայքարում են Փաշիզմի, մարդկության այդ ամենավոխերիմ թշնամու դեմ, Տրոցկին ու նրա արբանյակները Փաշիզմի հետ միասին պայքարում են ԽՍՀՄ-ի դեմ, սոցիալիզմի դեմ, բանվորական շարժման դեմ: Բանվորները տեսնում են, վոր այն ժամանակ, յերբ ժողովրդական մասսաները բոլոր յերկիրներում հանդես են գալիս ընդդեմ պատերազմի, խաղաղության գործի համար, Տրոցկին ու տրոցկիստները Փաշիստական ամենաազդեցիվ պետությունների հետ սերտորեն միացած գործում են վորպես պատերազմի հրճիգներ: Բանվորական մասսաները ձգտում են հասնել իրենց ուժերի համախմբմանը, միասնական ճակատ ստեղծելուն՝ ընդհանուր դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար. բուրժուազիայի շահերից յեղնելով՝ տրոցկիստները պայքարում են միասնական ճակատ կազմելու դեմ, ամեն կերպ ջանալով փոշիացնել և թուլացնել պրոլետարիատին և դժուր բերել նրա պարտությունը: Իսկ այստեղից առաջ և գալիս բանվորների աճող առելությունը տրոցկիզմի հանդեպ, այստեղից ել՝ նրանց աճող ըմբոստման այն անխախտելի փաստի, վոր չի կարելի հաջող կերպով պայքարել Փաշիզմի դեմ, ա-

ռանց համառ պայքար մղելու նրա տրոցկիստական դորձակա-
լուծյան դեմ, վոր տրոցկիզմի դեմ մղվող պայքարն աշխատա-
վորներին կողմից ֆաշիզմի և պատերազմի դեմ և հակաֆաշիս-
տական բոլոր ուժերի միավորման համար մղվող պայքարի ան-
բաժանելի, բաղկացուցիչ մասն է:



Թարգմ. Գ. Ղուկասյան
Խմբ. Հ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Ելչունյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր Ի—4910, հրատ. № 487,

Պատվ. № 151, տիրաժ 15.000

Հանձնված է արտադրության 1/VIII 1937 թ.

Ստորագրված է տպագրելու 21/VIII 1937 թ.

Գինը 20 Կ.

Հայկուհրատի տպարան, Յերեան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0194958

Д. МАНУИЛЬСКИЙ
О КАПИТАЛИСТИЧЕСКОМ
ОКРУЖЕНИИ И ТРОЦКИСТСКИХ
РЕЗЕРВАХ

Армипартизат, Ереван, 1937